ՆԱԽԱԳԻԾ 47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< >> << >> N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
21-Ի N 1399-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2323-Ն և 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1554-Ն որոշումներում փոփոխություն և լրացում կատարելու մասին>> N 1399-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը.

Որոշումը լրացնել նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:>>:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Իրավական ակտերի հիմնավորումը	
1.	***Անհրաժեշտությունը՝*** <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով. ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշմամբ նախատեսվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության մարմինների (այսուհետ՝ Ուժային կառույցներ) աշխատողների լրավճարների, հավելավճարների և պարգևատրումների չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: Նկատի ունենալով, որ վերը նշված ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է ս.թ. հոկտեմբերին, իսկ 2010 թվականի բյուջետային տարին ավարտվում է, և ժամանակի սղությամբ պայմանավորված, հնարավոր չէ ապահովել վերը նշված լրավճարների, հավելավճարների և պարգևատրումների չափերի սահմանումը՝ որոշման ուժի մեջ մտնելը նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից:
2.	***Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝*** Ուժային կառույցներում աշխատողների միջին ամսական աշխատավարձերը հաշվարկվում են միմյանց նկատմամբ հնարավորինս ոչ էական շեղումներով: Սակայն վերը նշված մարմինների կողմից տվյալ տարվա բյուջեների կատարման ժամանակ լրավճարների և պարգևատրումների գումարները նախատեսվում են տարբեր չափերով՝ ելնելով տվյալ մարմնում թվակազմի համալրվածությունից և դրանց գծով առաջացած <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածներով տնտեսումից: Արդյունքում առաջանում է միջին աշխատավարձերի գծով վերոհիշյալ մարմիններում զգալի շեղումներ, որը կանխելու նպատակին է ուղղված քննարկման ներկայացված որոշման նախագիծը:
3.	***Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝***
4.	***Կարգավորման նպատակը և բնույթը՝***

	Ուժային կառույցներում միջին աշխատավարձերի գծով առկա զգալի շեղումների կանխելու նպատակին է ուղղված քննարկման ներկայացված որոշման նախագիծը: Այդ կապակցությամբ ՀՀ կառավարության կողմից պետք է նախատեսվեն ժամկետներ ուժային մարմինների աշխատողների լրավճարների, հավելավճարների և պարգևատրումների չափերի սահմանման համար:
5.	***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք՝*** ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ
6.	***Ակնկալվող արդյունքը՝*** Միասնականության սկզբունքով Ուժային կառույցների աշխատողների լրավճարների, հավելավճարների և պարգևատրումների չափերի սահմանումը նպատակամղված է պարգևատրումների համակարգի հետագա կատարելագործմանը:
7.	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ գործող օրենսդրության մեջ կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ գործող օրենսդրության մեջ փոփոխություններ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական եկամուտներում և ծախսերում սպասվող փոփոխությունների վերաբերյալ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ ՀՀ նախարարությունների կամ պետական կառավարման այլ մարմինների կողմից իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ ՀՀ նախարարությունների կամ պետական կառավարման այլ մարմինների կողմից իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման ժամանակ իրավական ակտերից օգտվելու վերաբերյալ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ իրավական ակտերը.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի <<Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության կենտրոնական ապարատի, դրա անմիջական ենթակայության ստորաբաժանումների և տարածքային մարմինների սպայական, ենթասպայական և կրտսեր հրամանատարական կազմի պաշտոնային դրույքաչափերը (նվազագույն և առավելագույն) սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 1554-Ն որոշում:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Փրկարարական ծառայության ծառայողի պաշտոնային դրույքաչափը, փրկարարական ծառայության կոչման հավելավճարի չափը և Փրկարարական ծառայության ծառայողին տրվող սննդի փոխհատուցման գումարի չափը սահմանելու մասին>> N 2323-Ն որոշում:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության իրավական-փորձաքննական եզրակացությունը՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1399-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք:

Իրավաբանական վարչության պետ՝ **Ա. Մնացականյան**